# Jigglypuff

**Ժամանակի սահմանափակում՝ 0.5 վայրկյան**
**Հիշողության սահմանափակում՝ 256 MB**
**Կշիռը՝ 100 միավոր**

*Շարադրանք*

Jigglypuff-ը թաքնվել է `s` տողում: Հարկավոր է գտնել `s` տողի ամենափոքր նախածանցը, որը պարունակում է `"jigglypuff"` բառի բոլոր տառերը: Մուտքային տողում կարող են լինել միայն անգլերեն այբուբենի տառեր՝ մեծատառեր կամ փոքրատառեր: Ելքում նախածանցը, որը պարունակում է `"jigglypuff"` բառի տառերը՝ մեծատառ կամ փոքրատառ, պետք է արտածել այնպես, ինչպես տրված է մուտքային ֆայլում:
*Նախածանցը* ենթատող է որը ստացվում է տողի վերջից `0` կամ ավելի տառեր ջնջելով: Օրինակ՝ `"olymp"` տողի նախածանցներն են - `"o"` `"ol"` `"oly"` `"olym"` `"olymp"` .

*Մուտքային տվյալներ*

Առաջին տողում տրված է `s` տողի `n` երկարությունը, որը չի գերազանցում `123456`-ը: Երկրորդ տողում տրված է մինչև `n` երկարության միայն անգլերեն այբուբենի մեծատառերից և փոքրատառերից կազմված `s` տողը:

*Ելքային տվյալներ*

Արտածել տրված տողի ամենափոքր նախածանցի երկարությունը, ապա նախածանցը, որը պարունակում է `"jigglypuff"` բառի բոլոր տառերը: Երաշխավորվում է, որ պատասխան միշտ գոյություն ունի:

*Օրինակ*

| Մուտք | Ելք |
|---|---|
| 26<br>GGjigbestofALLfyfupsVKOSHP | 19<br>GGjigbestofALLfyfup |